ԵԴ1/4864/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 մարտի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի դեկտեմբերի 25-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արտակ Կամոյի Պետրոսյանի, Նորայր Ալբերտի Բարսեղյանի, Արկադիյա Ջուխրայի Բաղալյանի, Սասուն Հայկի Ասրյանի, Արտեմ Արբենի Ադամյանի, Գագիկ Մավրի Օհանյանի և Վալերի Էդիկի Կազարյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 364-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 90965120 (ԵԴ1/4864/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ա.Կարապետյան) 2025 թվականի դեկտեմբերի 29-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի փետրվարի 6-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Հ.Դաջունց) 2026 թվականի փետրվարի 19-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մարտի 2-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Արտակ Պետրոսյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի

համար, որ *«(…) նա, հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 120մմ ականանետային մարտկոցի ավագ սպա, կոչումով լեյտենանտ 2020թ. սեպտեմբերի 27-ից ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշման համաձայն հայտարարված ռազմական դրության պայմաններում նույն գումարտակի զինծառայողներ՝ Ա.Գ.Մ.-ի, Արկադիյա Ջուխրայի Բաղալյանի, Արտեմ Արբենի Ադամյանի, Գագիկ Մավրի Օհանյանի, Նորայր Ալբերտի Բարսեղյանի, Սասուն Հայկի Ասրյանի և Վալերի Էդիկի Կազարյանի հետ խմբով, հրաժարվել են կատարել զինվորական ծառայության առանձին պարտականությունները, որը զուգորդվել է դրանց չկատարմամբ.*

Այսպես.

ՊԲ հրամանատարի 14.12.2020 թվականի թիվ 01214 կարգադրության համաձայն ՊԲ 35383 զորամասի (3-րդ ՊՇ-ի) 3-րդ հրաձգային գումարտակի անձնակազմին հանձնարարվել է, նույն թվականի դեկտեմբերի 15-ին ընդգրկվել երթի Եմիշճյան-Ստեփանակերտ-Լիսագոր երթուղով և Լիսագոր կենտրոնով շրջանում անցնել «Բերձոր» խմբավորման հրամանատարության ենթակայության տակ: ՊԲ 3-րդ ՊՇ հրամանատար, գնդապետ Գ.Ի.-ի թիվ 0515 մարտական կարգադրության համաձայն նույն զորամասի 3-րդ հրաձգային գումարտակին տրվել է նույն խնդիրը:

ՊԲ 35383 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի անձնակազմը երթի ընդգրկվելուց առաջ՝ 15.12.2020թ. առավոտյան, զորամասի մշտական տեղակայման վայրում ստանալով զենք-զինամթերք և այլ անհրաժեշտ պարագաներ ու կազմելով շարասյուն ճանապարհվել է դեպի Լիսագոր կոչվող տեղանք, որտեղ տեղակայված է եղել «Բերձոր խմբավորման» հրամանատարական կետը: Շարասյունն իրականացրել է երթ և հասել Լիսագոր կոչվող տեղանքում տեղակայված «Բերձոր խմբավորման» հրամանատարական կետ, որտեղ մեքենաների շարասյունը կանգնել է ճամփեզրին, իսկ գումարտակի սպայական կազմն, այդ թվում ՊԲ 35383 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 120մմ ականանետային մարտկոցի ավագ սպա, լեյտենանտ Արտակ Կամոյի Պետրոսյանը վերադաս հրամանատարության ցուցումով ներկայացել է «Բերձոր խմբավորման» շտաբի մասնաշենք՝ մարտական խնդիրներ ստանալու համար:

«Բերձոր խմբավորման» հրամանատար, գնդապետ Հ.Մ.Թ.-ի կողմից ստանալով մարտական խնդիր՝ զբաղեցնել թիվ 101-105 մարտական դիրքերը, լեյտենանտ Արտակ Կամոյի Պետրոսյանը 2020թ. սեպտեմբերի 27-ից ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշման համաձայն հայտարարված ռազմական դրության պայմաններում, խախտելով «ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի» 41-րդ հոդվածի պահանջները, այն է՝ պարտավոր լինելով անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում կատարելու պետի հրամանը և «ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի» 43-րդ հոդվածի համաձայն իր առջև դրված խնդրի հաջող կատարման համար խելացի նախաձեռնություն ցուցաբերելու փոխարեն, նույն գումարտակի զինծառայողներ՝ կապիտան Ա.Գ.Մ.-ի, կապիտան Արկադիյա Զուխրայի Բաղալյանի, ավագ լեյտենանտ Արտեմ Արբենի Ադամյանի, ավագ լեյտենանտ Գագիկ Մավրի Օհանյանի, կապիտան Նորայր Ալբերտի Բարսեղյանի, կապիտան Սասուն Հայկի Ասրյանի և կապիտան Վալերի Էդիկի Կազարյանի հետ խմբով, նույն օրը վերադաս հրամանատարությանը բացահայտ հայտարարել է զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումից՝ թիվ 101-105 մարտական դիրքերի ուղղությամբ երթ իրականացնելուց և դիրքերը զբաղեցնելուց հրաժարվելու մասին, որը զուգորդվել է դրանց չկատարմամբ: (…)»[1]:

4.1 2025 թվականի նոյեմբերի 27-ի որոշումներով նույնաբովանդակ ենթադրյալ արարքների համար քրեական հետապնդում է հարուցվել նաև մեղադրյալներ Նարեկ Բարսեղյանի, Արկադիյա Բաղալյանի, Սասուն Ասրյանի, Արտեմ Ադամյանի, Գագիկ Օհանյանի և Վալերի Կազարյանի նկատմամբ[2]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ, ըստ մեղադրանքի փաստական մասի նկարագրության՝ Արտակ Պետրոսյանը, Վալերի Կազարյանը, Նորայր Բարսեղյանը, Սասուն Ասրյանը, Գագիկ Օհանյանը, Արկադիյա Բաղալյանը և Արտեմ Ադամյանը զինվորական պարտականությունների կատարումը փաստացի դադարեցրել են Արցախի Հանրապետության տարածքում, երբ Լիսագոր կոչվող տեղանքում*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 15-17:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 23-25, 33-35, 42-44, 51-53, 60-62, 76-78:

տեղակայված «Բերձոր խմբավորման» հրամանատարական կետում նույն խմբավորման հրամանատար, գնդապետ Հ.Մ.Թ.-ի կողմից ստանալով մարտական խնդիր՝ զբաղեցնել թիվ 101-105 մարտական դիրքերը, հրաժարվել են թիվ 101-105 մարտական դիրքերի ուղղությամբ երթ իրականացնելուց և դիրքերը զբաղեցնելուց, ինչը զուգորդվել է դրանց չկատարմամբ: Այսինքն՝ Արտակ Պետրոսյանին, Վալերի Կազարյանին, Նորայր Բարսեղյանին, Սասուն Ասրյանին, Գագիկ Օհանյանին, Արկադիյա Բաղայանին և Արտեմ Ադամյանին վերագրվող արարքներն ավարտվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս:

Մեջբերվածից նախ և առաջ պարզ է դառնում, որ նախաքննությամբ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը պարզվել է, հետևաբար, գործը, ըստ տարածքային ընդդատության՝ պետք է ուղարկվեր այն դատարան, որի դատական տարածքն ըստ էության ներառել է մեղադրյալների կողմից ենթադրաբար հանցանքը կատարելու վայրը: Իսկ որն է այդ դատարանը:

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ Արցախի Հանրապետության տարածքում ենթադրաբար կատարված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերը քննվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Ստացվում է, որ տվյալ դեպքում մեղադրյալներին վերագրվող արարքները ենթադրաբար կատարվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Ընդ որում՝ այս համատեքստում ամենևին նշանակություն չի կարող ունենալ Արցախի Հանրապետության՝ ներկայումս փաստացի գոյությունը դադարած լինելու և այդ տարածքի վրա այլ պետության իրավազորությունը հաստատված լինելու հանգամանքը, քանի որ, անկախ այդ հանգամանքից՝ դատարանը, որը քննել է նաև Արցախի Հանրապետության տարածքում ենթադրաբար կատարված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերը, չի վերացել կամ չի վերակազմավորվել: Այս համատեքստում Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հակառակ մոտեցումը Դատարանի մեկնաբանմամբ կվտանգի նախկինում

նմանատիպ բազմաթիվ գործերով կայացված և օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտերի կայունությունը:

Ինչ վերաբերում է թիվ ՇԴ/0020/01/24 որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի արտահայտած դիրքորոշմանը, ապա Դատարանի կարծիքով վարույթի ընդդատության հարցը լուծելու մասին որոշումը լուծում է կոնկրետ փաստական հանգամանքներ ունեցող գործերով երկու դատարանների միջև առկա ընդդատության մասին վեճը և չի կարող հիմք հանդիսանալ՝ այլ փաստական հանգամանքներ ունեցող գործով ընդդատության հարցը լուծելու համար: Մեջբերված որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ գործով քննության առարկա է հանդիսացել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործության դեպքը, որպիսի արարքը նախ չի ուղնձգում զինվորական ծառայության կարգի դեմ, ավելին՝ այդ գործով մեղադրյալները չեն հանդիսացել զինծառայողներ, ինչպես նաև նրանց վերագրվող արարքների հանգամանքները որևէ ձևով կապված չեն եղել զինվորական ծառայության հետ: Ավելին՝ հիշալ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը լուծել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման համատեքստում բարձրացված վեճը:

Դրանից բացի, եթե անգամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման լույսի ներքո անդրադառնանք սույն գործի տարածքային ընդդատության հարցին, ապա նախաքննությունը վերջինը իրականացրած մարմնի գտնվելու վայրի դատարանն իրավասու կլիներ սույն գործը քննելու, եթե պարզված չլիներ մեղադրյալների հաշվառման կամ փաստացի բնակության վերջին վայրը: Մինչդեռ, այն պարզված է, ընդ որում՝ նրանցից երկուսը Երևանի բնակիչ են, երկուսը՝ Արարատի մարզի, մյուսները՝ տարբեր մարզերի (մանրամասն տե՛ս նախնական դատալսումների ժամանակ՝ ինքնության ստուգման ընթացքում, մեղադրյալների հայտնած տվյալները պարունակող դատական նիստի արձանագրությունը և դատական նիստի ձայնագրությունը պարունակող լազերային սկավառակը): Նման պայմաններում էլ առաջանում է հետևյալ հարցը՝ արդյոք գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին (հիարկե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը կիրառելի լինելու դեպքում), եթե առկա չէ մեղադրյալների մեծամասնության՝ Երևանի բնակիչ հանդիսանալու հանգամանքը:

Ինչ վերաբերում է վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևանի կամ դրան հարակից բնակավայրերի բնակիչներ լինելու հանգամանքին, ապա դա ինքնին գործի ընդդատությունը որոշելու տեսանկյունից սույն փուլում, երբ գործը քննվում է ոչ այն դատարանում, որին ընդդատյա է գործի քննությունը, չի կարող նշանակություն ունենալ՝ գործի ընդդատությունը որոշելու առումով: (…)»[3]:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«(…) - Մեղադրյալներ Արտակ Կամոյի Պետրոսյանը, Նորայր Ալբերտի Բարսեղյանը, Արկադիյա Զուխրայի Բաղալյանը, Սասուն Հայկի Ասրյանը, Արտեմ Արբենի Ադամյանը, Գագիկ Մավրի Օհանյանը և Վալերի Էդիկի Կազարյանը թիվ 90965120 քրեական վարույթով իրենց մեղսագրվող ենթադրյալ հանցանքները կատարել են հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի զինծառայողներ, որը տեղակայված է եղել Արցախի Հանրապետությունում:

- Թիվ 90965120 քրեական վարույթով մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմինը հանդիսացել է ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ կայազորային վարչությունը, իսկ հետագայում՝ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունը, որոնց նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Դատարանը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը և Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0114/01/22 և թիվ ՍԴ3/0107/01/25 քրեական գործերով կայացված որոշումներով հայտնած դիրքորոշումները, համաձայն որոնց՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 76-90:

ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է, ապա մեղադրանքի քննությունը պետք է իրականացնի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական գործով ինչպես արդեն նշվեց, մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ կայազորային, իսկ այնուհետև՝ ՀՀ ՔԿ ՋՔԳՎ ՀԿԳ քննության վարչություններում (որտեղ էլ կազմվել է մեղադրական եզրակացությունը և քրեական վարույթն ուղարկվել դատարան), որոնց նստավայրը գտնվում է Երևան քաղաքում, հետևաբար թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Թեև վերը նշված արձանագրումների պայմաններում նշված հանգամանքն էական համարվել չի կարող, այդուհանդերձ հարկ է փաստել նաև, որ մեղադրյալների բնակության կամ հաշվառման վայրը Սյունիքի մարզում չի գտնվում:

Հարկ է նշել նաև, որ մեղադրական եզրակացությանը կցված՝ «Թիվ 90965120 քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների, դատարանին հետազոտման համար ներկայացվող՝ մեղադրանքի կողմի ապացույցների» ցանկի համաձայն՝ վարույթին ներգրավված են թվով 54 վարույթի մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից 20 անձ բնակվում են Երևան քաղաքում, 8 անձ՝ Կոտայքի մարզում, 8 անձ՝ Արարատի մարզում, 4 անձ՝ Արագածոտնի մարզում, 4 անձ՝ Արմավիրի մարզում, 2 անձ՝ Լոռու մարզում, 2 անձ՝ Գեղարքունիքի մարզում, 2 անձ՝ Սյունիքի մարզում, 1 անձ՝ Շիրակի մարզում, 1 անձ՝ Տավուշի մարզում, 1 անձ՝ Վայոց ձորի մարզում և իսկ 1 անձ էլ անհայտ կորած է:

Ամփոփելով ասվածը և հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում շարադրված վերլուծություններն ու դատողությունները, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական գործն ընդդատյա չէ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ուստի թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթը պետք է ուղարկել ՀՀ Վճռաբեկ

դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու նպատակով: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական*

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթեր 104-121:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, զանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[6]*:*

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

11. *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

(…)

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

(…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա*

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի դադարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի դադարածքային ընդդատության հարցը: (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արտակ Պետրոսյանի, Նորայր Բարսեղյանի, Արկադիյա Բադալյանի, Սասուն Ասրյանի, Արտեմ Ադամյանի, Գագիկ Օհանյանի և Վալերի Կազարյանի վերաբերյալ թիվ 90965120 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել և ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ մեղադրյալներին վերագրվող արարքներն ավարտվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս, մասնավորապես՝ Արցախի Հանրապետության տարածքում: Հաշվի առնելով, որ Արցախի Հանրապետության տարածքում ենթադրաբար կատարված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ վարույթները քննվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը հանգել է հետևության, որ մեղադրյալներին վերագրվող արարքները ենթադրաբար կատարվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ նախաքննությունը վերջինն իրականացրած մարմնի գտնվելու վայրի դատարանն իրավասու կլիներ սույն վարույթը քննելու, եթե պարզված չլիներ մեղադրյալների հաշվառման կամ փաստացի բնակության վերջին վայրը, որպիսի հանգամանք սույն վարույթով առկա չէ:

Արդյունքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը հանգել է հետևության, որ սույն վարույթն ըստ տարածքային

ընդդատության պետք է փոխանցել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[8]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մեղադրյալները եղել են Արցախի Հանրապետությունում տեղակայված զորամասի զինծառայողներ, իսկ մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կողմից, որի նստավայրը գտնվում է Երևանում, ինչպես նաև հաշվի առնելով նույնաբնույթ փաստական հանգամանքների առնչությամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից արտահայտված դիրքորոշումները, գտել է, որ սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[9]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է եղել պարզել Ա.Պետրոսյանին, Ն.Բարսեղյանին, Ա.Բաղալյանին, Ս.Ասրյանին, Ա.Ադամյանին, Գ.Օհանյանին և Վ.Կազարյանին վերագրվող հանցանքների կատարման վայրը, սակայն մեղադրանքի քննությունը տվյալ տարածքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անհնարին է: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել և ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Միաժամանակ, հաշվի առնելով վարույթին ներգրավված մեծաթիվ մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերը, Վճռաբեկ դատարանի քրեական

---

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

պալատը գտնում է, որ սույն վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում բխում է նաև արդարադատության շահից:

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտակ Կամոյի Պետրոսյանի, Նորայր Ալբերտի Բարսեղյանի, Արկադիյա Ջուխրայի Բաղալյանի, Սասուն Հայկի Ասրյանի, Արտեմ Արբենի Ադամյանի, Գագիկ Մավրի Օհանյանի և Վալերի Էդիկի Կազարյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ԵԴ1/4864/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ